Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-272[30]-27.02.2018-ԱՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «վավերացված» բառով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դ ենթակետում «միջկառավարական կամ միջգերատեսչական համաձայնագրի» բառերը փոխարինել «միջազգային պայմանագրի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 6.1-րդ մասում՝

1) 2-րդ պարբերությունում «միջպետական, միջկառավարական համաձայնագրերով» բառերը փոխարինել «միջազգային պայմանագրերով» բառերով,

2) 2-րդ կետում «միջպետական և (կամ) միջկառավարական համաձայնագրերի» բառերը փոխարինել «միջազգային պայմանագրերի» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: